ները, որ ահա մշտապես փառքով բարձրյալ Աստծու պաշտամունքիս. փառաբանության մեջ են: Կարբի գյուղում շինեց մի ձիթհանք կալերին մոտիկ. նույնպես իր հայրենի այգում շինեց մի վայելուչ հովանոց, որ կոչվում է Տեր Մխիթարի այգի: Միաբանները շատացրեց ավելի քան քառասուն, որոնք բոլորը միակամ ու միասիրտ էին: Նա շինեց մի գավիթ տապանատան վրա արևմտյան կողմում, մեծ գավթին կից հյուսիսային կողմում կոփածո քարերով: Դեռևս չէր ավարտված, իր տեղը նշանակեց Սարգիս վարդապետին, որ իր ձեռնասուն աշակերտն էր, հազար հարյուր քսանութ (1679) թվին: Իսկ ինքը վախճանվեց բարի մահով նոյեմբերի տասնչորսին՝ Սուրբ Հովհաննես Ոսկեբերանի տոնի օրը: Թաղվեց իր շինած գավթում: Մեռավ այստեղ, կենդանացավ Քրիստոսի մոտ. մեզ համար իր բարի անունը թողեց:

Իսկ Սարգիս վարդապետը ևս Կարբի գյուղաքաղաքից էր, որդին էր բարեպաշտ ու երկյուղած հարուստի, որ կոչվում էր Կարապետ. սա տոհմով Մսրեցի էր, որ մանուկ հասակում նրան (որդուն) տվեց Օհանավանքի Սուրբ ուխտին: Սա ապրեց համեստությամբ և պարկեշտ վարքով, սովորեց բարի վարք ու հոգևոր կրոն: Հովհաննես վարդապետը տեսնելով նրա ազնիվ վարքը՝ մանուկ հասակում նրան կուսակրոն քահանա դարձրեց ու տվեց տաճարապետության պաշտոն: Միառժամանակ պարկեշտությամբ մնալով նրան վարդապետության իշխանություն տվեց հազար հարյուր քսանութ (1679) թվին: Տեսնելով նրա հավատարմությունը և ազնիվ ծառայությունը՝ նրան տվեց այս սուրբ տան վերակացությունը: Այդ ժամանակ նա քսանութ տարեկան էր: Իսկ ինքը՝ Հովհաննես վարդապետը հրաժարված շրջում էր այստեղ-այնտեղ մինչև Եղիազար կաթողիկոսի գալը, որպեսզի եպիսկոպոս ձեռնադրել տա: Դեռևս կաթողիկոսը չէր եկել, ինքը մեռավ: Ինչպես ասացինք, Սուրբ Էջմիածնում տեղապահ էր լվովցի Ստեփանոս վարդապետը, որ բազմաթիվ վարդապետներով ու եպիսկոպոսներով եկավ թաղման:

Բայց նրան, որ ի սկզբանե չար էր, սատանան գրգռեց Սարգիս վարդապետի դեմ, ինչես Երոբովանը Սողոմոնի* դեմ, և քանի որ նա ուներ շատ նախանձողներ, որոնք նրան հակառակ էին և ահա

* Գ Թագ. ԺԱ 26:

վեր կացան և տվին շատ կաշառք շատերին և ոմանց հաջողեցրին: Սակայն նրանց կամքով չեղավ, որովհետև Կարբի գյուղի ռամիկները գրոհեցին և հալածեցին նախանձորդներին և դարձյալ Սարգսին հաստատեցին: Բայց նրանք չհանդուրժեցին, ինչպես որ երբեմն եղավ Ակռականդցու* նկատմամբ, նույնպես արին սրա հանդեպ: Սովորեցրին մի կնոջ և մատնեցին նրան աշխարհիկ դատավորներին, սակայն դրանով էլ չկարողացան վնասել, քանզի Կարբիի ռամիկները, որոնք գիտեին նրա մաքրությունն ու պարկեշտությունը, հարձակվեցին իշխանի (փաշայի) վրա և խլեցին նրա ձեռքից և տարան հաստատեցին իր տեղում: Եվ քանի որ իրենք չար էին, մատնեցին միմյանց հենց նույն իշխանին: Ըստ Սողոմոնի՝ արդարը որսողներից ազատվում է հանցավորը, քանի որ ընկերոջ համար խորխորատ փորեցին, իրենք ընկան մեջը: Եվ ահա մատնվեցին բանտի, շղթաների, կապանքների ու ծաղրի: Սարգիս վարդապետը նրանց և նրանց տանջանքները տեսավ, հիշեց Ավետարանի սուրբ խոսքերը, թե բարի արեք ատելիներին և ըստ Պողոսի կերակրեք թշնամուն (Հռոմ. ԺԲ 20), ուստի վարդապետը նրանց համար գնաց խոշոր պարտք արեց, տուգանք տվեց, ազատեց նրանց: Դեռ պարտքը տոկոսներով մնում է, իսկ հակառակորդները ցրվեցին և ոչինչ դարձան: Իսկ վարդապետը հաստատվեց ինչպես հողի մեջ հիմնավորված անշարժ վեմ: Այդ պատճառով աղաչում ենք Տիրոջը, որ սրան երկար օրեր կյանք տա՝ ասելով, թե նրանք քո ձեռքից մերժվեցին (Սաղմ. ՁԷ 87), բայց մենք քո փրկությամբ կցնծանք և ուրախ կլինենք քեզնով: Երեք տարուց հետո եկավ Եղիազար կաթողիկոսը Հունաստանից և մեծ փառքով կաթողիկոս նստեց Սուրբ Էջմիածնում և Սարգիս վարդապետին օրհնեց եպիսկոպոս հազար հարյուր երեսուն մեկ (1682) թվին, նրան կոնդակ տվեց և ուղարկեց գերափառ ուխտ՝ Օհանավանք: Ահա առաջնորդ է իր ժողովրդին և վարում է իշխանությունը ըստ ժամանակի թելադրանքի և ինչպես արժան է, կրել է տալիս: Սրա տերը կլինի առաջնորդ այստեղ ըստ մարմնի, իսկ հանդերձյալում՝ ըստ հոգու: Նրան փառք հավիտյանս. ամեն:

*Ակռականդցին (Սիցիլիայի Ակրականդա քաղաքից) եպիսկոպոս էր, մի կնոջ կողմից մեղադրվեց 11-րդ դարի 2-րդ կեսին: